«Կանայք բիզնեսում. տնտեսական աճի խթանում Սյունիքում»

«Կանայք բիզնեսում. տնտեսական աճի խթանում Սյունիքում» ծրագիրը մեկնարկել է 2025թ. ապրիլին և իրականացվում է «ՎԻՆՆԵԹ Գործիս» զարգացման հիմնադրամի կողմից: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության (ԵՄ) և Ավստրիական Զարգացման Գործակալության կողմից՝ «Դիմակայուն Սյունիք թիմ Եվրոպա» նախաձեռնության շրջանակում Ավստրիական Զարգացման գործակալության (ADA) կողմից իրականացվող «Սյունիքի վերականգնման, դիմակայունության և զարգացման ծրագրի» (R2D Սյունիք) ներքո:

Ծրագիրը նպատակ ունի խթանել տնտեսական աճը Սյունիքի մարզում՝ նպաստելով կանանց տնտեսական հզորացմանն ու ձեռներեցության զարգացմանը: Ծրագրի հիմնական գործունեությունը ուղղված է աջակցելու կանանց կողմից ղեկավարվող միկրո (սկսնակ), փոքր և միջին ձեռնարկատիրություններին Սյունիքի մարզում՝ արձագանքելով մարզում առկա սոցիալ–տնտեսական մարտահրավերներին, հատկապես գյուղական և հակամարտություններից տուժած շրջաններում:

Փուլ 1. Շահառուների գործարար հմտությունների զարգացում

Կարողությունների զարգացման դասընթացները կիրականացվեն տարբեր մոդուլներով՝ նախատեսված

1. սկսնակ (ստարտափ) ձեռներեցների համար
2. մինչև 3 տարի գործող ձեռնարկատերերի համար

- Ստարտափների համար կիրականացվեն բիզնես կարողությունների զարգացման 3–օրյա վերապատրաստման դասընթացներ Սյունիքի մարզի 7 թիրախային համայնքներում՝ դեմ առ դեմ ձևաչափով:
- Մինչև 3 տարի գործող ձեռնարկատերերի համար կիրականացվեն 2–օրյա վերապատրաստման դասընթացներ՝ 3 խմբով՝ Գորիս, Կապան և Սիսիան համայնքներում, դեմ առ դեմ ձևաչափով:

Փուլ 2. Դրամաշնորհային աջակցություն

Կարողությունների զարգացման փուլն ավարտած ծրագրի առաջին շրջափուլի մասնակիցների համար կհայտարարվի մրցույթ երկու տիպի դրամաշնորհային աջակցության համար՝

1. Սկսնակ կին ձեռներեցների համար – 14 փոքր դրամաշնորհ՝ յուրաքանչյուրը 2,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:
2. Մինչև 3 տարի գործող ձեռնարկատերերի համար – 6 միջին դրամաշնորհ՝ յուրաքանչյուրը մինչև 8,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Դրամաշնորհառուներին կտրամադրվի շարունակական խորհրդատվություն և աջակցություն: Նրանք կստանան նաև տեխնիկական աջակցություն և մասնագիտական խորհրդատվություն՝ համապատասխան իրենց բիզնեսի կարիքներին:

Փուլ 3. Կանանց ձեռներեցության (ԿՁ) ակումբ

Ակումբը կծառայի որպես մոտիվացիոն հարթակ կին ձեռնարկատերերի համար՝

- փորձի փոխանակման,
- անձնական և գործարար աճի,

- վոխադարձ աջակցման և ներշնչման նպատակով:

Ակումբի շրջանակում կանցկացվեն բիզնեսից բիզնեսին (B2B) հանդիպումներ՝ խթանելու նոր ձեռներեցների կապը խոշոր բիզնեսների սեփականատերերի հետ՝ մենթորության և համագործակցության ձևաչափով: